Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 07

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<23>> հունիսի 2026թ. ք. Երևան

2026 թվականի հունիսի 23-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Խաչատրյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար
Պ. Գալստյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի անդամ
Ռ. Այվազյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ
Մ. Հովհաննիսյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Իրավաբանական վարչության նախարարության իրավական շահերի պաշտպանության բաժնի ավագ իրավաբան, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Խաչատրյանը: Նիստից բացակայում էր հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը և հանձնաժողովի անդամ Տ. Գասպարյանը: Նիստն արձանագրում էր Ա. Ստեփանյանը:

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 3 հայտերի քննարկում:

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

1.1 Քննարկվեց՝ անհատ ձեռնարկատեր ԳՐԻՇԱ ՎԱՐԻԶԻ ՖԱՀՐԱԴՅԱՆԻ /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2026 թվականի հունիսի 4-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և 2026 թվականի հունիսի 11-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2026 թվականի հունիսի 4-ին լիազոր մարմին է ներկայացրել հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների

տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին՝ ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, քաղաք Էջմիածին, Էջմիածին-Ծաղկունք խճուղի 3/5 գործունեության վայրում: 2026 թվականի հունիսի 11-ին Կազմակերպությունը ներկայացրել է լրացուցիչ նյութեր՝ վերացնելով հայտին կից փաստաթղթերում առկա թերությունները:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը՝ տեխնիկական զննության կայանի տարածքների օգտագործման իրավունքի վկայականի պատճենը և հատակագիծը և տեխնիկական զննության անցկացման գործունեությամբ զբաղվելու համար օգտագործվող ապրանքների, առարկաների, սարքավորումների ստուգաչափումների դրական եզրակացությունները և տեխնիկական բնութագրերը պարունակող անձնագրերը: Կազմակերպության գործունեության վայրում ուսումնասիրություն իրականացվել է հանձնաժողովի անդամներ Պ. Գալստյանի և Տ. Գասպարյանի կողմից:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ԳՐԻՇԱ ՎԱՐԻՉԻ ՖԱՀՐԱԴՅԱՆ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն և 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներին՝ ենթակա է բավարարման: Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.2 Քննարկվեց՝ անհատ ձեռնարկատեր ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2026 թվականի մայիսի 29-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և 2026 թվականի հունիսի 10-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2026 թվականի մայիսի 29-ին լիազոր մարմին է ներկայացրել հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին՝ ՀՀ, Շիրակի մարզ, համայնք Գյումրի, քաղաք Գյումրի, Վ. Սարգսյան փողոց 24 գործունեության վայրում: 2026 թվականի հունիսի 10-ին Կազմակերպությունը ներկայացրել է լրացուցիչ նյութեր՝ վերացնելով հայտին կից փաստաթղթերում առկա թերությունները:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը՝ տեխնիկական զննության կայանի տարածքների օգտագործման իրավունքի վկայականի պատճենը և հատակագիծը և տեխնիկական զննության անցկացման գործունեությամբ զբաղվելու համար օգտագործվող ապրանքների, առարկաների, սարքավորումների ստուգաչափումների դրական եզրակացությունները և տեխնիկական բնութագրերը պարունակող անձնագրերը: Կազմակերպության գործունեության վայրում ուսումնասիրություն իրականացվել է հանձնաժողովի անդամներ Պ. Գալստյանի և Տ. Գասպարյանի կողմից:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲԻ ՀԱԿՈԲՅԱՆ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն և 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներին՝ ենթակա է բավարարման: Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.3 Քննարկվեց՝ «ՀՈՒՍԻԿ ՍԵԴՐԱԿՅԱՆ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2026 թվականի մայիսի 29-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և 2026 թվականի հունիսի 11-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2026 թվականի մայիսի 29-ին լիազոր մարմին է ներկայացրել հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, համայնք Սևան, գյուղ Վարսեր, Վարսեր Սևան-Երևան մայրուղի 56-57 կմ 4/3 գործունեության վայրում: 2026 թվականի հունիսի 11-ին Կազմակերպությունը ներկայացրել է լրացուցիչ նյութեր՝ վերացնելով հայտին կից փաստաթղթերում առկա թերությունները:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը՝ տեխնիկական զննության կայանի տարածքների օգտագործման իրավունքի վկայականի պատճենը և հատակագիծը և տեխնիկական զննության անցկացման գործունեությամբ զբաղվելու համար օգտագործվող ապրանքների, առարկաների, սարքավորումների ստուգաչափումների դրական եզրակացությունները և տեխնիկական բնութագրերը պարունակող անձնագրերը: Կազմակերպության գործունեության վայրում ուսումնասիրություն իրականացվել է Լիցենզավորման և թույլտվությունների բաժնի գլխավոր մասնագետներ Սասուն և Սամսոն Գրիգորյանների կողմից:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՀՈՒՍԻԿ ՍԵԴՐԱԿՅԱՆ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն և 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներին՝ ենթակա է բավարարման: Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահի տեղակալ Ա. Խաչատրյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյան